

ՋԻԲՆԵՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԻՄՆԱԴԻՐ՝

Գոսանական արուեստն ու ժողովրդական բանահիստությունը մարդկության ուղեկիցն են եղել ի սկզբանե, եղել են մշակոյթի հնագոյն արտայայտութիւններ: Նայ գոսանները սրելոճագործել են փակաւին հեթանոսական շրջանից եւ հասել մինչեւ ԺԴ. դար՝ փոխանցելով նոր ժամանակների իրենց հետնորդ արուեստիցներին: ԺԵ. դարից, երբ վերացել էր հայոց թագաւորական իշխանութիւնը, փռլի էին ունեցել քաղաքական, ընկերային ու փնտեսական արմարական փոփոխութիւններ, գուր ազգային *գոսան*-երեւոյթը փոխարինուեց ընդհանուր, համարելեւան *աշուղ*ով: Ներարքքիր է, որ Ալեքսանդրապոլի աշուղները 1892 թ. փետրվարի 24-ի վաերագրում («Նամախոսական վճիռ», որով Ջիւանին ճանաչում է «արհեստարւորների գլխաւոր») իրենց կոչել են «ասիական երգիչներ»՝ կարծես փաստագրելով արարերութիւնը գուր ազգային գոսանական արուեստից:

Աշուղները, ի արարերութիւն գոսանների, սրելոճագործում էին պարսկերէն, արաբերէն, յետոյ նաեւ թրքերէն՝ ծառայելով ամբողջ Մերձաւոր Արեւելքի մշակոյթին: Քանի որ աշուղական մրցումների նորահասարար աւանդութեամբ այդ միջոցառումները կարարում էին արեւելեան յիշեալ լեզուներով, ուստի հայ աշուղները փիրապետում էին դրանց: Նրանք գրել են նաեւ այլ հարեւանների լեզուներով, քրդերէն, վրացերէն, իսկ Միսկին Բուրջին փորձ է արել գրելու նաեւ ռուսերէն խաղ:

Ուշ միջնադարի մարենագրութիւնը նոյնպէս նկարելի փոփոխութիւններ էր կրում բառապաշարի մէջ ներառելով օրար՝ պարսկերէն ու արաբերէն, թրքերէն բառեր: Եթէ հայ աշուղներն սրելոճագործում էին հայերէն, անհամեմար բազմաբէր բառապաշար էին կիրառում նաեւ հայերէն երգերում: Իսկ Ջեյթունի երգերի թրքալեզու լինելը յիշեալ պարճառներից գար, ինչպէս նկարել է Թ. Պօղոսեանը, «պայմանաւորումաճ էր ռազմագիրական նկարառումներով. դրանք ըստ աւանդոյթի երգում էին մարտի դաշտում՝ թշնամուն դէմ առ դէմ»:

Անդրադառնալով խնդրոյ առարկայի երաժշտական բաղադրիչին՝ Թ. Պօղոսեանը արձանագրում է, որ Ջիւանին հենուել է հայկական ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութեան «եզօր հիմքի վրայ» եւ դրանով «շար կարեւոր մի քայլ է կարարել հայ աշուղական երգարուեստի պարմութեան մէջ. վերջնականօրէն եւ բացարճակապէս ազգայնացրել է հայ աշուղական մելոսը», հասարարել ազգային լինելու իրողութիւնը:

Իսկ մինչ այդ աշուղական երգերն սրելծում էին արևելեան լադերով և արևելեան մրաժողությունամբ: «Բայց քանի որ երգերը հայերենով էին երգում, ուստի այդ երգերում առկա էր հայկականությունը, թեև դրանք խառն էին և գուցահեռաբար զարգացող: Ջիւանին դրանք վերջնականապէս ազգայնացրեց: Մի հանգամանք, որ հիմք է տալիս նրան համարելու հայ աշուղական արուեստի Կոմիտաս»: Այս փաստը, անշուշտ, իրաւացիօրէն շեշտել են նաև Թ. Պօղոսեանի նախորդ ուսումնասիրողները: Պօղոսեանը յստակեցնում և վերաշեշտում է այդ ճշմարիտ դիտարկումը: Իսկ Կոմիտասը գնահատել է ազգային աշուղական դպրոցի առաջադրանքի, մասնաւորաբար Ջիւանիի սրելծագործութիւնը: Յայտնի է, օրինակ, որ իր «Անուշ» օպերայի Դ. գործողութեան մէջ նա օգտագործել է աշուղի «Քո փափագով» երգը (տե՛ս Մ. Բրուսեան, Երգահան Կոմիտաս վարդապետը. «Էջմիածին», 1959, Զ., էջ 21):

ԺԵ. դարից սկզբնաւորուած աշուղական արուեստի անցած ճանապարհը Թ. Պօղոսեանը բաժանում է երկու փուլի.

ա. ԺԵ.-ԺԹ. դարի կէս.

բ. այնուհետքէն՝ մինչև մեր օրերը:

Առաջին փուլը Թովմաս Պօղոսեանի հաշուումներով տուել է միայն 900 թրքախօս հայ աշուղ, որոնց մեծագոյն մասը սրելծագործում էր նաև հայերէն: Այս շրջափուլի կարարը Սայաթ-Նովայի (Յարութիւն Սայեադեան. 1722-1795) եռալեզեան սրելծագործութիւնն է: Երկրորդ փուլի սկզբնաւորողն ու ամենանշանաւոր դէմքն է Ջիւանին (Սերովբէ Լեւոնեան. 1946-1908)՝ հայ ազգային աշուղական դպրոցի հիմնադիրը, որ արժանապատիւն առաջնութիւն տուեց մայրենիին, հարթեց ազգային աշուղական դպրոցի ճանապարհը՝ մաքրագործելով թե՛ բանասրելծական բաղադրիչի լեզուն, թե՛ երաժշտութիւնը: Մեր համոզմամբ՝ այս պարագային որոշ չափով իր դերն է ունեցել նաև Ջիւանու ուսուցիչ Սիային:

Ձեռնամուխ լինելով մեծ աշուղի ժառանգութեան աննախադէպ ընդգրկուն ուսումնասիրութեան՝ Թ. Պօղոսեանը նպատակադրուել է «վեր հանել Ջիւանու ողջ սրելծագործութեան թեմատիկ բազմազանութիւնը», նրա «սրելծագործութիւնները դիտարկել աշուղական և նոր շրջանի հայ դասական բանասրելծութեան ընդհանուր համատեքստում և համեմատել իր նախորդների ու յաջորդների...հետ»: Եւ կարող ենք արձանագրել, որ նա հասել է նպատակին՝ առաւել արդիւնաւէր շարունակելով նախորդների սկսած աշխատանքը (Գարեգին Լեւոնեան, Մուշեղ Աղայեան, Կարօ Դուրգարեան, Աղասի Սահակեան և ուրիշներ):

Աշխատութիւնը բաժանուած է եօթն գլուխների, ունի նաև հաւելում. «Ջիւանու սրելծագործութիւնների մատենագիտական ցանկ», ուր ամենայն մանրամասնութեամբ, սկզբնաբողների այբբենական կարգով թարգմտուած են աշուղի 1194 գործերը, նշում են սկզբնաղբիւրները, բոլոր հրապարակումները, վերահրապարակութիւնները: Շար կարելուք սոյն հաւելումն արդէն պարբերաբար

նիթ է ապագայ ուսումնասիրողի համար: Այս փարողունակ աշխարութեանը նախորդել է փեսական բնագրագիտական հետազոտություն:

Թ. Պողոսեանը, առաջին անգամ հրապարակ է հանել 400 անփայ, որ իր հաշումներով կազմում է աշուղի՝ մեզ յայտնի երկերի 20 փոկոսը, եւ որ շարքաճր արդիւնք է: Ինչո՞ւ են անփայ մնացել վերոյիշեալ սրեղծագործութիւնները. Թ. Պողոսեանը նշում է մի շարք պարճառներ: Թերեւս հիմնականներից մէկը մարնացոյց է անում Զիւանին ինքը.

Անփող՝ գրածքներս անփայ կ'մնան,
Չունինք մէկ ապաւէն, չունինք ապաստան:

Անշուշտ, ցարական եւ խորհրդային գրաքննիչները նոյնպէս ունեցել են իրենց վճռական դերակարարութիւնը: Նասկանալի է, ազգային-ազարագրական բովանդակութեան, առհասարակ հայրենասիրական բնոյթի գործերը չէին խրախուսում: Մամուլն իրատունք չունէր ընթերցողին յիշեցնելու անցեալի փառաւոր անհարներին՝ թագաւորներին, արծարծելու ազարութեան գաղափար, հոլովելու ազգային հերոսների, ֆիդայիների անունները՝ Անդրանիկ Օգանեանից մինչեւ Վարդան Գոլոշեան: Շարք խօսում է «Ո՛վ սիրուն, սիրուն» երգի՝ զգօն գրաքննիչ Քիշմիշեւի «արբագրումը».

Կարանաս համբաւ, քիչ էլ ապաւէ,
Կուգայ ժամանակ, ո՛վ սիրուն, սիրուն,
Թագ ու պասկի քեզի կ'յանձնեն
Քոյրիկիդ նման, ո՛վ սիրուն, սիրուն:

Ընդգծուած բառերը փոխարինուել են՝ դառնալով **փառք ու պարիւղ**: Աշուղի միւրքը ճիշտ է հասկացել գրաքննիչը եւ աշխարել է մեղմացնել, շեղել:

Ելնելով այն հանգամանքից, որ Զիւանին սրեղծագործական շրջաններ չի ունեցել, չի սրեղծել բանասարեղծական շարքեր՝ հեղինակն իր հետազոտութիւնը կարարում է՝ երկերը խմբաւորելով ըստ նիւթի, այդպէս է ձեւաւորուել աշխարասիրութեան գլխակարգութիւնը:

Թ. Պողոսեանը վերլուծութիւնները կարարում է երբեմն հակիրճ, մակերեսօրէն, աւելի յաճախ հանգամանալից՝ իմաստասիրական, բնագրագիտական, գեղագիտական, բարոյագիտական հայեցակէրերով, մեկնարանում է երաժշտական խնդիրներ, աշուղի դրոյթները համեմարութեան առնում դասական գրողների մօրեցումների հետ, այս ամենին գուրնթաց աննկարելիօրէն ամբողջացնում է նաեւ պարմական միջավայրի պարկերը, մանաւանդ երբ քննում է իր ժամանակի հայոց պարմութեան 20-25 յայտնի փարիների իրադարձութիւնները, որոնց թարերաբեմն էին Արեւմտեան Նայաստանն ու Կովկասը: Ժամանակի

ու միջավայրի կենդանի նկարագրի հետ հեղինակը լիարժեք պարկերացում է Կալիս Զիւանու հայեցակարգի, աշխարհընկալման, աշխարհայեացքի, սրեղծագործական սկզբունքների մասին:

Նեղինակի ճշմարտացի դիպրումով՝ Զիւանին բազմակողմանի գիտաբանները ձեռք էր բերել ինքնակրթութեամբ: Նա շեշտում է, որ աշուղի խրատների «հայրենասիրական մոտիվները դուրս չեն գալիս կրօնի, լեզուի ու գրի սահմաններից»: «Նրա երգերը զարմանալի լայն տեսողաշար են ընդգրկել, և նրա սրեղծագործությունները վկայում են, - գրում է Թ. Պօղոսեանը, - ոչ միայն ջերմ հաւատի ու այն հայ հոգեւոր աւանդոյթից բխեցնելու մասին, այլեւ Աստուածաշնչի քաջիմացութեան և վերջինիս փարբեր իմաստուն փողերը բանաստեղծական վարպետութեամբ սեփական սրեղծագործութիւններին միահիւսելով՝ գրուող իր փողերին հոգեւոր մի նոր շունչ հաղորդելու՝ հեղինակի վարպետութեան մասին»: Տեղն է նշելու, որ Թ. Պօղոսեանը նոյնպէս հանդէս է բերում ոչ միայն Աստուածաշնչի, այլեւ առհասարակ կրօնական խնդիրների քաջիմացութիւն, հանգամանք, որով հաւելեալ կերպով փեսնում ենք, թէ որքան հոգեհարազատ է նրան Զիւանին:

«Մեծ աշուղի սրեղծագործութեան մեջ այնքան լայն տեղ ունի հոգեւոր մտածողութիւնը, - ասում է հեղինակը, - որ ազարագրական և ինքնապաշարպանական պայքարի ըմբռնումներն իսկ արտայայտում է կրօնական պարկերացումների միջոցով»: Նայրենիքը բռնազաւթուած է բարբարոս ցեղերի ձեռքով, նրա գաւակները փարպղնուած են աշխարհով մէկ, ի՞նչ է հայութեան վիճակը, հարցնում նա 1899-ին և պարասխանում՝ արտայայտելով հայութեան այդ պահի հոգեվիճակը.

Պապերս մնացած անդին,
Մեր փառքը, մեր պարծանքն է հին,
Նոգին, բացի եկեղեցին
Ոչ մի բան չմնաց մեզի...

Երբ Նայրենիքը վրանգում է, Զիւանին քրիստոնէայ հայի համար մեղք չի համարում գէնքի դիմելը, օրհասական պահին քարոզելը՝

Թնդանօթն է Արարիչ,
Նրացանը մեծ Փրկիչ,
Փոքրիկ վեցհարուածեանը՝
Աչք բացող Լուսաւորիչ:

Քնարերգութեան ասպարեզում Զիւանին հեղինակ էր բազմաթիւ զլուխգործոցների, բայց երբ ապերասան թշնամին մոլեգնում է՝ խրախուսուած հայի խաղաղասէր ընթացքով, բարութեան ու մարդկայնութեան երգիչը, մշակոյթը

ասպրումացնող աշուղը, որի «հոգին ու կեանքը» երգն է, գիրքն է, Ասպրումաշունչն է, սրբապղծությունն չի համարում ասելու՝

Տասը հազար գիրք կ'արժէ մէկ պիպուորի հրացանը:

Բայց բանասերեղծ-երգիչը, որ հայ ժողովրդի նուիրական յոյգերի ու երազանքների արտայայտիչն է, 1904-ին հենց երագում է.

Ա՛խ, պիպի փեսներնք մենք այդ օրերը,
Բանի պէտք չգան հրազէնները,
Ձեռք ձեռքի փուստ բոլոր ազգերը՝
Եղբայր ենք, ասեն, չլինին ռխակալ:

Իսկ որքա՞ն իրապետական է ժողովուրդների համընդհանուր հավասարության այս երագանքը: Մեծ փերությունները, մեծ ազգերը չեն կարող պարկերացնել կեանքը առանց իրենց գերակայության:

«Հայրենասէր եւ քրիստոսասէր Ջիւանին, - ինչպէս ասում է Թ. Պօղոսեանը, - շփուելով ժողովրդի բոլոր խաւերի հետ՝ մրաւորականից մինչեւ շինական, քարոզել, խրատել, խորհուրդներ է փռել, դաստիարակել է սերունդներ: Նրա խրատներն ու խորհուրդները «բազմամօրի, բազմաթեմա են, բայց պայմանականօրէն կարող ենք բաժանել երեք խոշոր խմբերի՝ հայրենապաշտական, ընդհանրապաշտական, ընկերապաշտական: Ըստ որում, այս խմբերի կազմաւորման ելակէտը համոզմունքն ու հաւատարմութիւնն է, մարդկային բարոյական խորը, ազնիւ զգացումը՝ առաքինութիւնների ու արժանիքների հիմքը», - կարդում ենք աշխատութեան մէջ: Ջիւանու մշտական մտահոգութիւնն է եղել, որ հայ մարդը, առաջին հերթին հայ երիտասարդը, «գիտակցի իր ազգային ինքնութիւնը, որը դարերի ընթացքում պահպանուել է երեք գործօնների շնորհիւ. լեզուն, գիրը եւ կրօնը»:

Նրացանն է՝ ձայն հանելիս կ'գոռայ,
Որի կեանքը կառնէ, որին կեանք կուրայ,
Այն երեքն են պահել մինչեւ ի հիմա.
Սուրբ կրօնը, լեզուն եւ հայոց գիրը:

Թերեւս հարկ չկայ արձագանքելու աշխատութեան ատլի կամ պակաս կարևոր բոլոր հարցադրումներին, որոնք նույնպէս վկայում են ջիւանիական լայնարձակ աշխարհի բոլոր խնդիրների՝ հեղինակիս գերազանց իմացութիւնը: Մեզ կարծես մնում է յիշատակել շուրջ երկու փաստակ եզրակցութիւններից մի քանիսը՝ թիչ թէ շատ ամբողջական գաղափար կազմելու համար գրախօսվող աշխատութեան վերաբերութեամբ:

Ջիւանուն բախր է վիճակուել ժամանակաշրջանի պահանջին համահունչ, գիտակցաբար խախտելով աշուղական երգի արեւելեան աւանդական կանոն-

ները, ընդլայնել թեմայիկ սահմանները և հանդես գալ ոչ միայն որպես սիրոյ, բարոյախօս-խրատարութիւն երգիչ, այլև հրապարակախօս, ուսուցիչ, ազատագրական պայքարի ջարագով:

Եւրոպայում բռնկուած ազատագրական շարժումները հայերի համար ոգեւորիչ օրինակ էին, ասում է հեղինակը: Ջիւանու յօրինած երգերի առիծի բաժինը կազմում են հայրենասիրական, ու ազատագրական պայքարի սրեղծագործութիւնները: Աշուղ-բանաստեղծը հաւատարիմ մնաց իր փեսակէտին ու սկզբունքին: Նա ներկայանում էր իբրեւ հայ մարդ՝ հպարտ իր հայութեամբ:

Աշուղ-բանաստեղծը ակադեմիկական ու դառնութեամբ է ընդգծում իր ժողովրդի հանդէպ դրսեւորուող անարդար վերաբերմունքը: Ջիւանին ոգեկոչում է Հայաստանի առասպելական, վիպական ու պարմական հերոսներին՝ ընդգծելու համար հարազատ ժողովրդի ծագումը, արժանիքները:

Մի շարք երգերում նա հայրենի երկրի դժբախտ ճակատագրի, աներ, ուրքի կոխան լինելու պարճառը համարում է պանդխտութիւնը: Նա ցոյց է փայլիս, որ գաղթականը չի կարողանում վայելել իր աշխարհների արդիւնքը: Միակ ապահով վայրը հայրենիքը կարող է լինել. ուստի հարկատու է միատուրել և պայքարել յանուն հայրենիքի: Ըստ Ջիւանու մի երգի՝ հայրենիքի բանտը լաւ է, քան օտար երկրի արքայութիւնը:

Աղերայի 1900-ական թականներին երեսօթներն իրենց անունով կոչելուց զատ, Ջիւանին լայնօրէն օգտագործում էր խորհրդանշաններ բուսական ու կենդանական աշխարհից՝ ելնելով համեմատելիի վարքագծի նմանութիւնից:

Ջիւանու երգերում առկայ է դրացիների հետ հաշտ ու խաղաղ ապրելու երազանքը: Մի երգում, որ բնութագրական է Ջիւանի սրեղծագործողի համար, նա դիմում է թուրք աշուղին, առաջարկում ձեռք-ձեռքի փայլ, գնալ գիւղերը և ժողովրդի մէջ խաղաղութիւն ու հաշտութիւն քարոզել: Իր երգերում աշուղը երգում էր մարդկանց եղբայրութեան, հաւասարութեան մասին:

Ջիւանին գովերգում է մարդկային արժանիքները. ընկերասիրութիւն, համեմատութիւն, հաւատարմութիւն և այլն: Նրա բանաստեղծական աշխարհին առանձին հմայք են հաղորդում աստուածաշնչական բանաձեւային արքայայտութիւնները, հայ և հարեւան ժողովուրդների դիցաբանութեական, առասպելական ու պարմական հերոսների ոգեկոչումը՝ ասածը համոզիչ դարձնելու նպատակով:

Սոյն ևս այսպէս չլիշուած միւս եզրակացութիւնները բխում են աշխարհութեան մէջ դիտարկուած նիւթերից և ընդհանուր առմամբ յաջողութեամբ ամփոփում են ուսումնասիրութեան առարկան: Ջիւանին մեզ ներկայանում է նոր լոյսի փայլ, անելի լաւ ենք ճանաչում մենք աշուղին:

Պէտք է նշել, սակայն, որ աշխարհութիւնն ունի որոշ վրիպումներ, առարկութիւն վերցնող հասարակարմունք: Պարսկական են մանր կրկնութիւններ, ոչ ստրոգ

բառօգտագործման դեպքեր, որոնք չեն խամրեցնում ընդհանուր տպավորությունը, եւ հարկ չենք համարում անդրադառնալ դրանց: Մեզ թույլ է՝ կարելի էր միատրել Գ. եւ Դ. գլուխները, իսկ Է. գլխի վերջնամասը, Զ. գլխի հետք՝ նկատի ունենալով ամկայ ընդհանրությունները:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ Թովմաս Պօղոսեանի սոյն աշխատությունը արժանի է բարձր գնահատականի: Նեղիմակը մասնագիտօրէն եւ համակողմանի քննութեամբ վերլուծել, բնութագրել ու գնահատել է մեծ աշուղի գրական-երաժշտական հարուստ ժառանգությունը, ինչպէս Նր. Աճառեանը պիտի ասէր՝ եռեակ հմրութեամբ: Այդ բանը նրան յաջողուել է՝ ունենալով բանասիրական կրթութիւն, ուսանելով Կոմիտասի անուան երաժշտանոցում եւ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում: Թովմաս Պօղոսեանի աշխատությունը կարարելապէս հիմք է տալիս խօսելու Զիւանու կեանքի ու գործի ուսումնասիրութեան ասպարէզում հեղինակի գիտական կարեւոր ներդրման մասին:

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ